**ՄԱՐԻՆԵ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ**
ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական
տեխնոլոգիաների ամբիոնի ասիստենտ,
սոցիոլոգիական գիտությունների թեկնածու

# ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ ՎԱՅՐԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՅԻՆ ԽՆԱՄՈՂ ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Հոդվածում ներկայացված է «պենիցիտար մայրություն» հասկացությունը՝ որպես մայրության և ազատազրկման համադրման հատուկ կարգավիճակ: Հեղինակը ցույց է տալիս, որ մայր-երեխա համատեղ բնակությունը նպաստում է կանանց վերասոցիալականացմանը և երեխաների բարեկեցությանը, սակայն պայմանավորված է մի շարք սոցիալական ու իրավական դժվարություններով: Սոցիալական աշխատողի դերը դիտարկվում է որպես միջնորդի, աջակցության և իրավունքների պաշտպանի, ում գործունեության նպատակը մոր և երեխայի շահերի համատեղ ապահովումն է:

**Հիմնաբառեր**- պենիցիտար մայրություն, սոցիալական աշխատանք, քրեակատարողական հիմնարկ, մոր և երեխայի իրավունքներ:

**Ներածություն**

Ազատազրկված կանայք համարվում են քրեակատարողական համակարգում խոցելի խմբերից մեկը: Նրանց խնդիրները բազմաշերտ են և հաճախ անտեսված: Այդ խնդիրները առավել սրվում են այն դեպքերում, երբ կինը ազատազրկման ընթացքում խնամում է իր երեխային: Այս երևույթը մասնագիտական գրականության մեջ հայտնի է որպես պենիցիտար մայրություն՝ մայրության և ազատազրկման համադրման հատուկ կարգավիճակ: Պենիցիտար մայրության ուսումնասիրությունը կարևոր է ոչ միայն իրավական, այլև սոցիալական և հոգեբանական տեսանկյունից, քանի որ այն առնչվում է ինչպես երեխայի լավագույն շահի ապահովմանը, այնպես էլ մոր վերասոցիալականացման և հասարակություն վերաինտեգրման գործընթացին:

Հայաստանում այս ոլորտը դեռևս խորությամբ ուսումնասիրված չէ: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել ազատազրկման վայրերում երեխա խնամող կանանց հետ սոցիալական աշխատողի գործունեության հիմնական ուղղությունները և դիտարկել դրանց կիրառման առանձնահատկությունները՝ հիմնվելով միջազգային փորձի և տեղական իրողությունների վերլուծության վրա:

**Հետազոտության մեթոդաբանությունը**

Հետազոտությունը հիմնված է որակական վերլուծության վրա: Օգտագործվել են հետևյալ մեթոդները՝

- Գրականության վերլուծություն՝ ուսումնասիրելու պենիցիտար մայրության վերաբերյալ միջազգային և հայաստանյան գիտական, իրավական աղբյուրները (ՄԱԿ-ի «Բանգկոկյան կանոններ», Եվրոպական բանտային կանոններ, ՀՀ քրեակատարողական օրենսգիրք և այլն),
- Համեմատական վերլուծություն՝ տարբեր երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Նորվեգիա, Շվեդիա) փորձի համադրմամբ՝ բացահայտելու ազատազրկման վայրերում երեխա խնամող կին դատապարտյալների համար ստեղծված պայմանները և սոցիալական աշխատողի հինական գործառույթները:
- Վերլուծական համադրություն՝ միջազգային փորձի արդյունքների համեմատում ՀՀ-ում գործող իրավական և սոցիալական մեխանիզմների հետ:

Հետազոտության տեսական հիմքը ձևավորվել է սոցիալական աշխատանքի գործառույթների, մարդու իրավունքների պաշտպանության և վերասոցիալականացման տեսությունների վրա:

**Հետազոտության արդյունքները**

Համաձայն Հանցագործության և արդարադատության քաղաքականության ինստիտուտի 2024 թվականի զեկույցի՝ 2024 թվականին ամբողջ աշխարհում կին դատապարտյալների թիվը կազմել է մոտ 733000 մարդ: Կին դատապարտյալների թվով 1-ին հորիզոնականը զբաղեցնում է ԱՄՆ-ն՝ մոտ 174607 կին դատապարտյալով, հաջորդիվ՝ Չինաստանն է՝ մոտ 145000 կին դատապարտյալով, այնուհետև Բրազիլիան՝ մոտ 50441 կին դատապարտյալով և 4-րդ տեղում ՌԴ-ն է՝ մոտ 39153 կին դատապարտյալով: Ըստ նույն զեկույցի՝ կին դատապարտյալների թիվը ՀՀ-ում 2024 թվականին կազմել է 61 մարդ:

Հատկապես դժվարին է այն կանանց վիճակը, ովքեր ազատազրկման ընթացքում խնամում են իրենց երեխաներին: Այս երևույթը մասնագիտական գրականության մեջ բնորոշվում է «պենիցիտար մայրություն» հասկացությամբ: Ըստ էության պենիցիտար մայրությունը քրեակատարողական համակարգի կողմից ապահովվող հատուկ կարգավիճակ է, որի դեպքում մայրը իրավունք ունի խնա-

www.ardaradatutyunjournal.com

մել և դաստիարակել իր երեխային քրեակատարողական հիմնարկում (ՔՀԿ) մինչև որոշակի տարիքը (սովորաբար մինչև 2–3 տարեկան)՝ հատուկ պայմաններում[2]:

Հարկ է նշել, որ պենիցիտար մայրությունը նախ և առաջ սոցիալական երևույթ է, որը ձևավորվում է ազատազրկման և մայրության համադրման արդյունքում: Այս դեպքում առաջնային է դառնում երեխայի բարեկեցության ապահովումը և մոր վերասոցիալականացման ու վերաինտեգրման հնարավորությունների պահպանումը[3]:

Մարդու իրավունքների տեսանկյունից պենիցիտար մայրությունը ենթադրում է մոր ազատազրկման իրավական սահմանափակումների և երեխայի լավագույն շահի համադրումը[4]:

Պենիցիտար մայրությունը երկակի զգացմունքներ է առաջացնում և հաճախ քննադատվում հասարակության կողմից: ՔՀԿ աշխատակիցների մեծամասնությունը ևս բացասաբար է վերաբերում պենիցիտար մայրությանը, քանի որ կարծում է, որ այդ կանանց մեծամասնության իրական նպատակն է պատժաչափի կրճատումը, չաշխատելը, սնվելու և բժշկական սպասարկման պայմանների բարելավումը[5]: Այս ամենը վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է օգնել կին դատապարտյալներին գիտակցելու սեփական անձի կարևորությունը իրենց երեխաների համար, ձևավորելու նրանց մոտ մայրության զգացումը և երեխայի կյանքի նկատմամբ պատասխանատվությունը:

Մի շարք հետազոտություններ ցույց են տալիս, որ ազատազրկման վայրերում կին դատապարտյալների և նրանց երեխաների համատեղ բնակությունը դրական ազդեցություն է ունենում թե կանանց, և թե երեխաների վրա: Այսպես, երեխաների հետ շփումը դրական է անդրադառնում ազատազրկված կանանց վարքի վրա. նրանք դառնում են համբերատար, հանդուրժող, շատերը հրաժարվում են վնասակար սովորույթներից՝ ծխելուց, կարգուկանոնը խախտելուց, նրանց մոտ ձևավորվում են մայրական զգացմունքները: Բացի այդ, երեխաների հետ մշտական կապը ազատազրկված կանանց մոտ առաջացնում և ամրապնդում է ընտանիքը պահպանելու ցանկությունը: Ըստ էության երեխայի հետ շփումը ազատազրկված կնոջ համար դառնում է ուղղման և վերասոցիալականացման հզոր խթան[6]:

Այս ամենի հետ մեկտեղ, պենիցիտար մայրության դեպքում կանանց սոցիալական հիմնախնդիրները կրկնապատկվում են՝ պայմանավորված մի կողմից պատժի կրման դժվարություններով, մյուս կողմից՝ մայրության իրավունքի իրացման սահմանափակումներով: Նման իրավիճակներում սոցիալական աշխատողը հանդես է գալիս ոչ միայն որպես աջակցության և խորհրդատվության մասնագետ, այլև որպես պաշտպան և միջնորդ՝ կնոջ, երեխայի և արտաքին աշխարհի միջև:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տարբեր երկրներում երեխա խնամող կին դատապարտյալների համար ՔՀԿ-ներում ստեղծված են հատուկ պայմաններ: Այսպես, օրինակ, Մեծ Բրիտանիայի որոշ ՔՀԿ-ներում գործում են մոր և մանկական համար նախատեսված հատուկ տարածքներ (mother and baby units), որտեղ երեխան կարող է մնալ մոր հետ մինչև 18 ամիս[7]:

Շվեդիայի պրակտիկան ավելի շատ շեշտադրում է ընտանիքի պաշտպանությունը, խրախուսում այլընտրանքային համայնքային լուծումները: Որոշ ՔՀԿ-ներում իրականացվում են «երեխա-մայր» ծրագրեր՝ ուղղված այնտեղ խնամվող երեխաների դրական դաստիարակության ապահովմանը[8]:

Գերմանիայում սովորաբար գործում են «Mutter-Kind» (մայր-երեխա) միավորներ՝ ինչպես փակ, այնպես էլ բաց ռեժիմի ՔՀԿ-ներում: Փակ ռեժիմի ՔՀԿ-ներում երեխան մոր հետ կարող է մնալ մինչև 3 տարեկանը լրանալը, իսկ բաց ռեժիմի քրեակատարողական հիմնարկներում՝ ընդհուպ մինչև 6 տարեկանը լրանալը: Երեխա խնամող կին դատապարտյալների համար իրականացվում են ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացներ, նրանց տրամադրվում են այլ աջակցող ծառայություններ[9]: Իսկ, օրինակ, նորվեգական մոտեցումը համեմատաբար եզակի է. նորվեգիական քաղաքականությունը շեշտադրում է երեխայի լավագույն շահը՝ նախապատվությունը չտալով մանկական տարիքում դատապարտյալ մոր հետ երեխայի երկարաժամկետ բնակեցմանը[10]:

Հայաստանի քրեակատարողական օրենսգրքով նախատեսված է, որ «...քրեակատարողական հիմնարկում անհրաժեշտության դեպքում ստեղծվում է մանկան տուն՝ երեխաների բնակության և զարգացման պատշաճ պայմաններով: Դատապարտյալը քրեակատարողական հիմնարկի մանկան տանը կարող է տեղավորել իր մինչև երեք տարեկան երեխային և աշխատանքից ազատ ժամերին շփվել նրա հետ՝ առանց սահմանափակման: Դատապարտյալին կարող է թույլատրվել երեխայի հետ համատեղ բնակություն»[11]:

Ըստ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցի՝ 2022 թվականի մարտին Աբովյանի կանանց քրեակատարողական հիմնարկում այցելության ժամանակ արձանագրվել է, որ այնտեղ պահվում էին երեք կին, ովքեր ունեին մինչև երեք տարեկան երեխաներ: Երեքից երկու մայրերը երեխաների հետ բնակվում էին կանանց ընդհանուր մասնաշենքում, իսկ մեկը՝ առանձին, մեկուսացված պայմաններում: Զեկույցում նշվում է, որ երեխաների աճի և զարգացման համար պայմանները բավարար չեն. չկան հարմարեցված խաղային տա-

www.ardaradatutyunjournal.com

րածքներ, սահմանափակ է մանկաբույժի և համապատասխան բժշկական ծառայությունների հասանելիությունը[12]:

Անդրադառնալով երեխա խնամող կին դատապարտյալների խնդիրներին՝ հարկ է նշել, որ նրանք հաճախ բախվում են երեխայի խնամքի համար անհրաժեշտ կեցության անբավարար պայմանների խնդրին: Այսպես, օրինակ, խցերը և կացարանները հաճախ հարմարեցված չեն լինում մանկահասակ երեխաների համար: Բացակայում կամ պակասում են հիգիենայի միջոցները, խաղալիքները, մանկական կահույքը[13]:

Այս դեպքում սոցիալական աշխատողը գնահատում է երեխայի և մոր կարիքները: Բացի այդ, սոցիալական աշխատողը կարող է միջնորդել ՔՀԿ վարչակազմին՝ երեխային մանկական անկողին, սնունդ, հագուստ և խաղալիքներ տրամադրելու հարցում:

ՔՀԿ-ներում իրենց երեխաներին խնամող որոշ կանայք չեն ունենում երեխաների խնամքի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ: Այս տեսանկյունից կարևորվում է սոցիալական աշխատողի կողմից ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված դասընթացների կազմակերպումը:

Հաճախ ՔՀԿ-ներում իրենց երեխաներին խնամող մայրերը ունենում են մեղքի զգացում, վախ, որ կարող են կորցնել ծնողական դերը: Երեխաները ևս կարող են ենթարկվել սթրեսների, ֆիզիկական և հոգեհուզական զարգացման որոշակի ռիսկերի՝ փակ միջավայրի պատճառով[14]: Այս դեպքում սոցիալական աշխատողը կարող է ուղղորդել կնոջը հոգեբանի հետ պարբերական հանդիպումների: Բացի այդ, սոցիալական աշխատողը կարող է կազմակերպել նաև սթրեսի կառավարման խմբեր:

Սոցիալական աշխատողի գործունեության կարևոր բաղադրիչներից է նաև կին դատապարտյալի և նրա երեխայի իրավունքների պաշտպանությունը: Այսպես, սոցիալական աշխատողը կարող է իրազեկել կնոջը իր և երեխայի իրավունքների, իրավական գործընթացների վերաբերյալ: Սոցիալական աշխատողը կարող է կապ հաստատել իրավաբանների, իրավապաշտպան կազմակերպությունների հետ, կին դատապարտյալին տրամադրել աջակցություն դատական գործի ընթացքի վերաբերյալ[15]:

Սոցիալական աշխատողը փորձում է հասկանալ, թե ազատազրկված կինը ինչ մտահոգություններ ունի դատական գործընթացի վերաբերյալ, ուղեկցում է դատարան այցելության ժամանակ, աջակցում է դատական փաստաթղթերի պատրաստման հարցում[16]:

Սոցիալական աշխատողը կարևոր դեր է կատարում նաև ՔՀԿ-ում երեխա խնամող կնոջ նկատմամբ հնարավոր խտրականության, ֆիզիկական, հոգեբանական, սեռական բռնության դեպքերի բացահայտման և կանխարգելման, ինչպես նաև հավասար հնարավորությունների ապահովմանն ուղղված աշխատանքների կազմակերպման գործում[17]:

Երբ պարզվում է, որ ՔԿՀ-ում իր երեխային խնամող մայրը ունի նաև այլ երեխա կամ երեխաներ, նրանք ևս հայտնվում են սոցիալական աշխատողի ուշադրության կենտրոնում: Այս դեպքում սոցիալական աշխատողը կազմակերպում և վերահսկում է ազատազրկված մոր և մյուս երեխաների հանդիպումը, նպաստում, որ մայրը բացատրի երեխաներին իր գտնվելու վայրը՝ նրանց հասկանալի լեզվով[18]:

ՔՀԿ-ներում սոցիալական աշխատողի առկայությունը անհրաժեշտ է, քանի որ նրանք աջակցում են ազատազրկված մայրերին՝ պահպանելու կապը իրենց երեխաների և ընտանիքի մյուս անդամների հետ: Սոցիալական աշխատողները էական դեր են խաղում ազատազրկված կանանց ինքնավնասման նվազեցման, հուզական աջակցության ապահովման և ընտանիքների հետ կապերի պահպանման գործում[19]:

**Եզրակացություն**

Ամփոփելով՝ կարող ենք գալ այն եզրահանգմանը, որ ՔՀԿ-ներում իրենց երեխաների հետ բնակվող կանայք բախվում են տարբեր խնդիրների՝ սկսած կեցության պայմաններից մինչև սոցիալական մեկուսացում: Սոցիալական աշխատողի դերը կենսական է՝ որպես միջնորդ, իրավունքների պաշտպան և աջակցող մասնագետ: Այս դեպքում սոցիալական աշխատողի գործունեության նպատակն է ապահովել, որ երեխայի շահերը լինեն գերակա և մայր-երեխա կապը պահպանվի՝ անկախ ազատազրկման հանգամանքներից:

ՀՀ-ում անհրաժեշտ է մշակել հատուկ սոցիալական ծրագրեր, որոնք կապահովեն մայրության իրավունքի իրացման և երեխայի լավագույն շահի համատեղ հավասարակշռումը ՔՀԿ-ում: Անհրաժեշտ է ամրապնդել սոցիալական աշխատողի ինստիտուտը քրեակատարողական հիմնարկում՝ ստեղծելով և զարգացնելով միջգերատեսչական համագործակցություն իրավապահ, առողջապահական և կրթական կառույցների հետ: Խիստ կարևոր է սոցիալական աշխատողների մասնագիտական վերապատրաստումը՝ պենիցիտար մայրության, երեխաների զարգացման և տրավմայի հաղթահարման թեմաներով: Միջազգային փորձի կիրառումը կարող է նպաստել այնպիսի ծրագրերի ներդրմանը, որոնք կօգնեն կին դատապարտյալներին արդյունավետ կատարել ծնողական դերերը, իսկ երեխաներին՝ խուսափել սոցիալական մեկուսացումից:

www.ardaradatutyunjournal.com

[1] World Female, Imprisonment List, p. 2; p. 12 https://www.prisonstudies.org/sites/default/files/resources/downloads/world_female_imprisonment_list_6th_edition.pdf
[2] United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders (Bangkok Rules), Rule 49–52, 2010.
[3] Goshin, L. S., & Byrne, M. W. "Converging Streams of Opportunity for Prison Nursery Programs in the United States." Journal of Offender Rehabilitation, 2009, 48(4), 271–295.
[4] Council of Europe, European Prison Rules, Recommendation Rec (2006)2.
[5] Пиюкова С. С. Педагогические основы совместного проживания осужденных женщин с детьми в местах лишения свободы, Педагогические науки, DOI 10.37523/SUI.2020.38.2.014, ст. 95.
[6] Пиюкова С. С. Особенности воспитательной работы с осужденными женщинами, имеющими детей в домах ребенка при исправительных учреждениях // Преступление, наказание, исправление: материалы IV Международного пенитенциарного форума. Рязань, 2019. С. 132–136.
[7] Pregnancy and childcare in prison, https://www.gov.uk/life-in-prison/pregnancy-and-childcare-in-prison, 25.09.2025.
[8] Norman A., Enebrink P., Evaluation of the For Our Children's Sake intervention, parental support in prison to influence positive parenting: study protocol for a controlled trial, BMJ Open, 2020 Jun 7;10(6):e034834. doi: 10.1136/bmjopen-2019-034834.
[9] Germany, https://www.penalreform.org/?s=Germany, 25.09.2025.
[10] Crewe, H. "No Babies in Prison?" - Norway's Exception Explained Cambridge Open Engage, 2020, https://www.cambridge.org/engage/coe/article-details/5f94c2a58f3ba900111bdc84, 20.09.2025.
[11] ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 90, կետ 1:
[12] Human rights defender of the Republic of Armenia, Annual report on the activity of the human rights defender of the Republic of Armenia as the national preventive mechanism in the year 2022, Yerevan, 2023, pp. 77-78.
[13] Breuer E. , Remond M. and others. The needs and experiences of mothers while in prison and post-release: rapid review and thematic synthesis, Health Justice, 2021 Nov 12; 9(1):31, doi: 10.1186/s40352-021-00153-7.
[14] Տե՛ս նույն տեղում:
[15] Government of South Australia, Department for correctional services, Working with prisoners offenders, Social workers, What a social worker does, https://tinyurl.com/4cw8svkw, 22.09.2025.
[16] Mudaliyar Sh., Social work with children of prisoners, Mumbai, 2024, p. 43, https://tiss.ac.in/uploads/files/A_Study_on_Social_Work_with_Children_of_Prisoners_2024..pdf, 23.09.2025.
[17] Տե՛ս նույն տեղը:
[18] A prison social worker from a women's prison talks about visitation, Washington, 2002, https://practicenotes.org/vol7_no1/prison_socialworker_visitation.htm, 19.09.2025.
[19] Social work today, Dedicated social workers in women's prisons could tackle record levels of self-harm, 2024, https://www.socialworktoday.co.uk/News/dedicated-social-workers-in-women%E2%80%99s-prisonscould-tackle-record-levels-of-self-harm , 22.09.2025.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 90, կետ 1:
2. Пиюкова С. С. Особенности воспитательной работы с осужденными женщинами, имеющими детей в домах ребенка при исправительных учреждениях // Преступление, наказание, исправление: материалы IV Международного пенитенциарного форума. Рязань, 2019. С. 132–136:
3. Пиюкова С. С. Педагогические основы совместного проживания осужденных женщин с детьми в местах лишения свободы, Педагогические науки, DOI 10.37523/SUI.2020.38.2.014, ст. 93-100:
4. A prison social worker from a women's prison talks about visitation, Washington, 2002, https://practicenotes.org/vol7_no1/prison_socialworker_visitation.htm, հրատարակման ամսաթիվ՝ 2002թ. հունվար, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 19:
5. Breuer E., Remond M. and others. The needs and experiences of mothers while in prison and post-release: rapid review and thematic synthesis, Health Justice, 2021 Nov 12; 9(1):31, doi: 10.1186/s40352-021-00153-7:
6. Council of Europe, European Prison Rules, Recommendation Rec (2006)2:
7. Crewe, H. "No Babies in Prison?" - Norway's Exception Explained Cambridge Open Engage, 2020,https://www.cambridge.org/engage/coe/article-details/5f94c2a58f3ba900111bdc84, հրատարակման ամսաթիվը՝ 2020թ. հոտկեմբերի 23, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 20:
8. Germany, https://www.penalreform.org/?s=Germany, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 25:
9. Goshin, L. S., & Byrne, M. W. "Converging Streams of Opportunity for Prison Nursery Programs in the United States." Journal of Offender Rehabilitation, 2009, 48(4), 271–295:
10. Government of South Australia, Department for correctional services, Working with prisoners offenders, Social workers, What a social worker does, https://tinyurl.com/4cw8svkw, հրատարակման ամսաթիվը՝ 2023թ. օգոստոսի 14, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 22:

11. Human rights defender of the Republic of Armenia, Annual report on the activity of the human rights defender of the Republic of Armenia as the national preventive mechanism in the year 2022, Yerevan, 2023, pp. 77-78:
12. Mudaliyar Sh., Social work with children of prisoners, Mumbai, 2024, p. 43, https://tiss.ac.in/uploads/files/A_Study_on_Social_Work_with_Children_of_Prisoners_2024..pdf, հրատարակման ամսաթիվը՝ 2024թ. հոտեմբերի 10, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 23:
13. Norman A., Enebrink P., Evaluation of the For Our Children's Sake intervention, parental support in prison to influence positive parenting: study protocol for a controlled trial, BMJ Open, 2020 Jun 7; 10(6):e034834. doi: 10.1136/bmjopen-2019-034834:
14. Pregnancy and childcare in prison, https://www.gov.uk/life-in-prison/pregnancy-and-childcare-in-prison, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 25:
15. Social work today, Dedicated social workers in women's prisons could tackle record levels of self-harm, 2024, https://www.socialworktoday.co.uk/News/dedicated-social-workers-in-women%E2%80%99s-prisonscould-tackle-record-levels-of-self-harm,
հրատարկման ամսաթիվը՝ 2024թ. հունվարի 5, վերջին այցելություն՝ 2025թ. սեպտեմբերի 22:
16. United Nations Rules for the Treatment of Women Prisoners and Non-custodial Measures for Women Offenders (Bangkok Rules), Rule 49–52, 2010:

References

1. ՀՀ քրեակատարողական օրենսգիրք, հոդված 90, կետ 1:
1.HH khrekataroghakan orensgirk', hodvats 90, ket 1 (in Armenian):

2. Пиюкова С. С. Особенности воспитательной работы с осужденными женщинами, имеющими детей в домах ребенка при исправительных учреждениях // Преступление, наказание, исправление: материалы IV Международного пенитенциарного форума. Рязань, 2019. С. 132–136:
2. Piyukova S. S. Osobennosti vospitatel'noy raboty s osuzhdyonnymi zhenshchinami, imeyushchimi detey v domakh rebenka pri ispravitel'nykh uchrezhdeniyakh // Prestuplenie, nakazanie, ispravlenie: materialy IV Mezhdunarodnogo penitentsiarnogo foruma. Ryazan', 2019. S. 132–136. (in Russian):

3. Пиюкова С. С. Педагогические основы совместного проживания осужденных женщин с детьми в местах лишения свободы, Педагогические науки, DOI 10.37523/SUI.2020.38.2.014, ст. 93-100.
3. Piyukova S. S. Pedagogicheskie osnovy sovmestnogo prozhivaniya osuzhdyonnykh zhenshchin s det'mi v mestakh lisheniya svobody, Pedagogicheskie nauki, DOI 10.37523/SUI.2020.38.2.014, st. 93–100. (in Russian):

**Марине Ярмалоян**
Ассистент кафедры социальной работы и социальных технологий ЕГУ,
кандидат социологических наук

**РЕЗЮМЕ**

***Социальная работа с женщинами, воспитывающими детей в местах лишения свободы***

В статье вводится понятие «пенитенциарное материнство» как особый статус, сочетающий материнство и лишение свободы. Отмечается, что совместное проживание матери и ребенка способствует ресоциализации женщин и благополучию детей, однако сопровождается множеством социальных и правовых трудностей. Роль социального работника рассматривается как посредника, защитника и помощника в обеспечении интересов матери и ребенка.

**Ключевые слова**: пенитенциарное материнство, социальная работа, исправительное учреждение, права матери и ребенка.

**Marine Yarmaloyan**
Assistant Professor of the Department of Social Work and Social Technologies,
YSU, PhD in Sociology

**SUMMARY**
***Social work with women raising children in places of detention***

The article presents the concept of "penitentiary motherhood" as a special status of combining motherhood and imprisonment. The author shows that mother-child cohabitation contributes to the resocialization of women and the well-being of children, but is conditioned by a number of social and legal difficulties. The role of a social worker is considered as a mediator, supporter and defender of rights, whose activity is aimed at jointly ensuring the interests of the mother and child.

**Key words**: penitentiary motherhood, social work, correctional institution, mother and child rights.

Ընդունվել է տպագրության 26.12.25թ.